

ՄԻՇԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿԻ «ԾԻՐԱՆԱՎՈՐ» ԵԿԵՂԵՑԻՆ

1. Պատմական համառոտ ակնարկ

Պատմական Հայաստանի Արագածոտն գավառի այժմ Աշտարակի շրջանը հարուստ է տարբեր ժամանակաշրջաններում կառուցված ճարտարապետական հուշարձաններով:

Որպես բնակատեղի այն հիշատակվում է վաղ ժամանակներից: Ինչպես նշում է Բ. Ղափանցյանը[1], Օշականում, Աշտարակում և շրջակա մյուս գյուղերում հայտնաբերվել են նախաբնակների կմախքներ: Այդ հնագույն վայրերը տեղացիները անվանում են «Օղազի քեալաֆեք»՝ հասկանալով իբրև «մարդակերների տներ»: Վերջերս Աշտարակում բացվել են մի քանի դամբարաններ, որոնք վերաբերում են բրոնզե դարերին:

Աշտարակ անունը շատ հին է: Այդ անունը, այլ տեղերի անունների հետ միասին, պահպանվել և հասել է մեզ նախնական՝ խալդական-ուրարտական ժամանակներից»[2]:

19-րդ դարի վերջում Աշտարակը ձգվում էր Քասախ գետի աջ ափով և տարածվում հյուսիսից դեպի հարավ, գետի երկարությամբ մինչև Օշական գյուղի սահմանները: Մեր օրերում այն տարածվում է նաև դեպի արևմուտք:

Աշտարակ գյուղը պատմության մեջ հիշատակվում է 9-րդ դարի վերջից:

---

[1] **Բ. Ղափանցյան**, «Հնութեան մի քանի հիշատակարաններ», «Արարատ», 1914 թ., № 1, էջ 91:

[2] **Երվանդ Շահազիզ**, «Աշտարակի պատմությունը» (բնագիր):



Աշտարակի «Ծիրանավոր» եկեղեցի.
տեսքը դեպի արևմուտք

Առաջին անգամ այն հիշատակողը Ստեփանոս Ասողիկ պատմագիրն է, որը իր պատմության մեջ (Գիրք Բ, գլուխ Բ) այդ մասին գրում է.

«Եւ ապա Տէր Գէորգ յԱրագածոտն է ի գեղն է Աշտարակաց՝ ամս Գ.»[3]:

Շատ հանգամանորեն և մանրամասն է նկարագրել Աշտարակ գյուղի կազմավորումը Երվանդ Շահազիզը իր «Աշտարակի պատմությունը» աշխատության մեջ[4]:

Գյուղը հնում բաժանվում էր հինգ թաղի, որոնցից հնագույնը Բերդաթաղն էր: Այն իր անունը ստացել է Բերդից, որը կառուցված է եղել ձորի ամենաբարձր ապառաժոտ քարափին, համեմատաբար ոչ մեծ տարածության վրա: Այստեղ է հաստատված եղել գյուղի նախնական բնակչությունը և ապա, ժամանակի ընթացքում, տարածվելով կազմել է մյուս թաղերը: Բերդաթաղը երեք կողմից շրջապատված է եղել հաստատուն պարիսպներով, որոնցից արևմտյան կողմինը ամենաբարձրն ու ամենաերկարն է եղել՝ շինված քարակրով և չորս կողմից ամրացված կոփածո քարե բուրգերով: Բերդի հատակագծային հորինվածքը ունեցել է երկարավուն քառանկյան ձև: Հյուսիսից և հարավից եղել է մեկական եկեղեցի: Հյուսիսայինը կոչվել է «Ծիրանավոր» կամ «Աստվածածին-մեծ» եկեղեցի, իսկ հարավայինը՝ «Սպիտակավոր» կամ «Աստվածածին-փոքր» եկեղեցի: Նշվում է, որ բերդը մինչև 1864 թվականը թեև կիսավեր, բայց կանգուն է եղել: Այդ թվականից սկսած թաղի գյուղացիք քանդել են բերդը և տեղում, նրանց հիմքերի վրա բնակարաններ են կառուցել: Վերջերս կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերը նշված երկու եկեղեցիներից բացի, Բերդաթաղի տարածքում, բնակչության տնամերձ հողատարածություններում, փլատակների տակ գոյություն են ունեցել ևս երկու շինություններ, որոնց կառուցվածքի տիպի մասին այժմ հնարավոր չէ որևէ ճշգրիտ խոսք ասել: Այդ շինությունների որոշ ձևերից ելնելով՝ կարելի է միայն նշել, որ դրանք ներկայացնում են վաղ շրջանի կառույցներ (կառույցներից մեկի հյուսիս-արևմտյան անկյունում պահպանված է հնագույն մի կոթող, որի չորս կողմերում կան բուսական թեմաներով որմնաքանդակներ):

Ներկա/ ուսումնասիրությունը նվիրված է Բերդաթաղի տարածքում գտնվող «Ծիրանավոր» եկեղեցուն, որի մանրակրկիտ չափագրությունը կատարվել է 1985 թ. իմ և ճարտարապետներ Լ. Պ. Անտոնյանի, Ա. Վ. Սիմոնյանի կողմից:

2. «Ծիրանավորի» կառուցման ժամանակաշրջանի նկարագիրը

Տաճարի կառուցման ժամանակը նշող կամ այն բնորոշող ոչ մի պատմական վկայություն չկա:

Աշտարակի բազիլիկ եկեղեցու կառուցման ժամանակաշրջանի մասին տարբեր հեղինակներ հայտնել են տարբեր կարծիքներ: «Ծիրանավորի» բազիլիկան Թորամանյանը համարում է ամենաուշը 5-րդ դարի գործ[5]:

Ստրժիգովսկին այն կապում է Աշտարակի կաթողիկոս Ներսես Բ-ի

---

[3] **Ստեփանոս Տարոնեցի**, Ասողական «Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ 1885 թ., էջ 82, 106:

[4] **Երվանդ Շահազիզ**, «Աշտարակ գյուղը և նրա հուշարձանները» (բնագիր):

[5] **Թ. Թորամանյան**, «Տեկորի տաճարը», էջ 210, 211: Նաև՝ «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատոր 1-ին, էջ 244,, 289:



(548—557 թթ.) ժամանակաշրջանի հետ, այսինքն՝ համարելով 6-րդ դարի կառույց[6]: Տոկարսկին «Քասախը» դասելով Աշտարակի եռանավ բազիլիկայի տիպին, գտնում է, որ երկուսն էլ կառուցվել են ոչ ուշ, քան 6-րդ դարում և ունեցել են մույթերի և որմնասյուների համապատասխանող թաղակիր կամարներով թաղակապ ծածկեր[7]:

3. Հուշարձանի տեխնիկական վիճակը

Աշտարակի «Ծիրանավոր» եկեղեցին իր հատակագծային հորինվածքով եռանավ բազիլիկ եկեղեցի է (գծ. 1 բ): Այն ներկայումս գտնվում է կիսավեր վիճակում: Հուշարձանի ներքին տարածությունը (9,38·19,18 մմ) երեք զույգ T-անման մույթերի միջոցով բաժանված է մեկ լայն (գլխավոր) և երկու նեղ նավերի: Աբսիդը ունի պայտաձև հատակագիծ (գծ. 1, լուսանկար 4), որը երկու կողմից ավանդատներով արտաքուստ վերցված է մեկ ընդհանուր ուղղաձիգ պատի մեջ՝ կազմելով մի ամբողջություն: Պահպանված են գլխավոր նավի հարավային կամարաշարքը (որն ունի շեշտված պայտաձև աղեղներ) և նրա վրայից սկսվող թաղակապ ծածկի մի հատված: Հյուսիսային կամարաշարքը ամբողջովին ավերված է: Պահպանված հարավային նավի թաղակիր կամարները նույնպես ունեն շեշտված պայտաձև աղեղներ: Այդ թաղակիր կամարները երկու կողմից հանգչում են պատերի մեջ ագուցված պահունակների վրա: Թաղը, որն իրականացված է կոպտատաշ քարից (հիմնատակով վերաշարված), տաճարի ծածկի ավերումից հետո հետագա դարերում կատարված միջամտություն է, որն արտահայտում է նավի տասեբուն ձևը: Սակայն այս միջամտությունից խախտվել են պահունակների իսկական նիշերը, թաղակիր կամարների կախվածության չափերը, և սրբատաշ քարից իրականացված ողջ թաղը փոխարինվել է կոպտատաշ քարով:

Հյուսիսային նավի հյուսիսային պատը իր մեջ անաղարտ կերպով պահպանել է պատի մեջ ագուցված երեք պահունակները, թաղակիր կամարների հատվածային մասերը, որոնք հանգչում են այդ պահունակների վրա: Գլխավոր նավի թաղակիր կամարները եղել են կիսաշրջանաձև (պահպանված են հատվածներ):

Անդրադառնալով Աշտարակի բազիլիկային՝ Թորամանյանը նշում է, որ տաճարը չափազանց հստակ կերպով բովանդակում է այն ժամանակվա կրոնական պահանջների հատկանիշները թե՛ հուղակագծի և թե՛ ընդհանուր շինության մեջ[8]: Չափումները ցույց տվեցին, որ տաճարը համարյա ճիշտ արևելյան կողմնորոշում ունի: Նրա արևելյան ճակատը 3°-ով թեքված է դեպի հյուսիս-արևելք:

Արտաքինից հուշարձանն ունի 24,54·11,60 մմ չափեր: **Հարավային ճակատը,** որը համարյա ամբողջ հիմնատակով վերաշարված է վաղ ժամանակաշրջանում, բարձրանում է բավականին լավ պահպանված մեծածավալ եռաստիճան գետնախարսխի վրայից: Գետնախարսխի առաջին աստիճանը ամբողջ կառույցի պարագծով չի պտտվում, այլ, հասնելով արևելյան և արևմտյան անկյուններին, ընդհատվում է: Հարավային պատի նախնական շարվածքից պահպանված են գետնախարսխից անմիջապես սկսվող առաջին

---

[6] J. Strzygowski—"Die Baukunst der Armenier und Europa" B. I. s. 146.

[7] Н. М. Токарский—«Архитектура древней Армении». стр. 55.

[8] Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», էջ 289:


գ
դ
ե
զ
1մ
0
3մ
1
0
1

շարքը (հատվածային), հարավ-արևելյան և հարավ-արևմտյան անկյունաքարերը (հատվածային) և հարավային մուտքի անկյունաքարերը: Այս ճակատում գոյություն ունեցող երկու փոքր բացվածքներով պատուհանները արդյունք են հետագա փոփոխությունների: Սկզբնապես պատուհանները ունեցել են խոշոր բացվածքներ, որպիսիք նրա արևմտյան ճակատի պատուհաններն են: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հարավային մուտքը այնուհետև արդեն է եղել: Վերջինս այժմ ամբողջությամբ ավերված է: Դրա ակնառու ապացույցն է որմնասյան խարսխի առկայությունը, որը, առանց շինարարական կապի, ուղղակի դրված է տաճարի գետնախարսխի առաջին շարքի վրա և հարթ մակերեսով հպված է հաջորդ աստիճանի ուղղաձիգ մակերեսին:

Անկասկած շքամուտքը պետք է ավարտված լիներ ճակտոնով (ներգրծված պայտաձև կամարով), քանի որ դա բնորոշ է եղել տվյալ ժամանակաշրջանին պատկանող բազիլիկաների կառուցողական ձևերին:

Անշուշտ նույնպիսի ձևավորում պետք է ունեցած լիներ նաև արևմտյան շքամուտքը, սակայն ինչպես վերջինիս մանրամասների, այնպես էլ պատուհանների արտաքին հարդարանքների ձևերի մասին այժմ հնարավոր չէ խոսել, քանի որ ամբողջ արևմտյան պատը պարփակված է հետագայում ավելացված պատով: Նմանատիպ վիճակում է գտնվում նաև հյուսիսային պատը: Պետք է ենթադրել, որ այս ճակատի խուլ հարթության վրա կառուցված են եղել որմնամույթեր (2—3 հատ), որոնք հասել են ընդհուպ մինչև հուշարձանի ամբողջ պարագծով ընթացող ընդհանուր քիվը (գծ. 1 բ): Դա անշուշտ ամրության և այդ խուլ հարթությունը չլատելու նպատակով կատարված պիտի լիներ: Այս ենթադրությունը հիմնավորվում է նրանով, որ այդպիսի կառուցողական ձևեր գոյություն ունեն նույն ժամանակաշրջանի բազիլիկային տիպի այլ կառուցվածքներում (Քասախ, Գառնի, Երերույք և այլն):

Արևելյան ճակատը նույնպես բարձրանում է եռաստիճան գետնախարսխի վրայից: Վերջինիս երրորդ աստիճանի որոշ մասը ավերված է (գծ. 2): Պահպանված են այս ճակատի հյուսիս-արևելյան անկյան ատամնավոր քիվը (գծ. 9 բ.) որոշ հատվածով, ինչպես նաև աբսիդի (1,91·0,6 **մմ**) և ավանդատների (0,71·0,28 **մմ**) պատուհանները: Այս ճակատի որոշ մասեր վերաշարվել են ինչպես հետագա դարերում, այնպես էլ մեր օրերում:

Պետք է նշել, որ այդ բացվածքները զուրկ են որևէ արտաքին հարդարանքից: Ընդհանրապես արտաքին հարդարանքներից շատ քիչ բան է պահպանվել: Տանիքի համար օգտագործվել են կղմինդրներ, որոնց միացման հանգույցները ծածկվել են հատուկ ձևավոր կղմինդրներով: Կառույցի ներքին տարածությունում, ինչպես նաև կրկնակի պատերի մեջ պահպանված են զանազան կոթողներ և առանձին ճարտարապետական էլեմենտների բեկորներ: Կոթողների մշակման հիմնական ձևերն արտահայտված են բուսական մոտիվներով, որոնք բնորոշում են կենաց ծառի խորհրդանիշը (գծ. 3):

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հուշարձանի ներքին կառուցվածքը հետագա դարերում կատարված վերափոխումների արդյունք է: Կառույցի ներքին տարածությունում, հյուսիսային պատի վրա պահպանված են երկու հնագույն որմնասյուներ իրենց գետնախարիսխներով (գծ. 1բ): Վերջիններս գլխավոր նավի T-անման մույթերի նկատմամբ ունեն միանգամայն այլ դասավորություն, այլ կերպ ասած՝ լրիվ պատահական դիրք: Միանգամայն պարզ է, որ հյուսիսային պատի վրա պահպանված որմնասյուները գո-



գծ. 3

յություն են ունեցել մինչև գլխավոր նավի կամարաշարքերի և նրանց վրայից սկսվող թաղակապ ծածկի կառուցումը: Գլխավոր նավի հարավ-արևմտյան անկյունում պահպանված թաղը արևմտյան պատին հպված է առանց որևէ շինարարական կապի (լուսանկար—1, գծ. 3): Դա ցույց է տալիս, որ պահպանված այդ թաղի հատվածը արևմտյան պատի նկատմամբ հետագա ժամանակաշրջանի հավելված է: Տաճարի ներքին կառուցվածքի փոփոխման մասին արտահայտվել են մի շարք հեղինակներ, ինչպես՝ Ա. Սահինյանը: Այդ մասին նա նշում է. «Պահպանված մույթերը և թաղակապ ծածկի հիպումը տաճարի պատերին առանց շինարարական կապի, ցույց են տալիս, որ այժմյան եռանավ մասը ժամանակակից չէ տաճարի սկզբնական կառուցվածքին»[9]: Կառույցի ներքին կառուցվածքի արմատական փոփոխությունների մասին (5—6-րդ դարերում) Ս. Մնացականյանը հանգում է այն եզրակացության, որ սկզբից ծածկի հենարաններն ունեցել են անհամեմատ ավելի մեծ թռիչքներ[10]: Եվ իրոք, չափագրությունները ցույց են տալիս, որ, եթե տաճարի ներքին կառուցվածքները այժմ վերափոխումներից հետո, ունեն ծածկի հենարանների 3,05—3,18 մ թռիչքներ, ապա ի սկզբանե այդ հենարաններն ունեցել են 5,65—5,75 մ թռիչքներ (գծ. 1. Ա):

Քանակապես փոփոխվել են նաև Т-անման մույթերը: Եթե սկզբնական շրջանում դրանք եղել են երկու զույգ՝ գլխավոր նավի կամարաշարքերի ուղղությամբ, ապա հետագա արմատական վերափոխումներից հետո դրանց քանակը կազմել է երեք զույգ (գծ. 1 բ): Արմատական այսպիսի փոփոխություններին անդրադարձել է նաև Ֆրանչեսկո Գանդոլֆոն[11]:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել Т-անման մույթերի և հենագույն որմնասյուների խարիսխների չափերի և մանրամասների վրա: Պահպանված հյուսիսային պատի հենագույն որմնասյուների և արևմտյան պատի որմնասյուների խարիսխները իրենց մշակումով և չափերով խիստ տարբերվում են տաճարի Т-անման մույթերի խարիսխների մանրամասներից: Այդ որմնասյուների խարիսխները իրենց մանրամասներով համարյա նույնն են, ինչ որ տաճարի աբսիդի հյուսիսային և հարավային անկյունների, ինչպես նաև հարավային շքամուտքի արևելյան որմնասյան խարսխի մանրամասները: Ինչպես նշում է Թ. Թորամանյանը խարիսխների մշակման նման ձևերը շատ հարազատ են Քասախի, Երերույքի, Տեկորի սկզբնական կառուցվածքների խարիսխների մշակման ձևերին[12]: Տաճարի մույթերի և ավագ խորանի իմպոստներն ունեն միևնույն ձևերը և միևնույն մշակումները (տարբերվում են իրենց չափերով): Այս իմպոստները որոշակի նմանություն ունեն Երերույքի, Ավանի Զորադիրի իմպոստների հետ:

4. Շինարարական տեխնիկան

Շինարարական արվեստի տեսակետից ուշագրավ կառուցվածք է ունեցել թաղը: Բացի նրանից, որ թաղը ուժեղացված է եղել թաղակիր կամարներով, թաղի քարերը իրենց չորս կողմնային մասերով ունեցել են ուղղանկյուն փորվածքներ, որոնք, հպվելով իրար, առաջացրել են մի դատարկ տա-

[9] **Ա. Սահինյան**, «Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը», էջ 115:
[10] **Ս. Մնացականյան**, «Երևանը և նրա շրջակայքը», 1971 թ., էջ 158, 159:
[11] **F. Gandolfo**—"Le Basiliche Armene", Roma, 1982, 80—81.
[12] **Թ. Թորամանյան**, «Տեկորի տաճարը», Թիֆլիս, 1911, էջ 15, 17, 21, 35:

րածություն, որը, լցվելով կրաշաղախով, ստեղծել է ամուր կապ: Դա թաղին տվել է առավել միաձուլություն:

Տաճարը թե՛ դրսից և թե՛ ներսից կառուցված է հիմնականում սև մոխրագույն և տեղ-տեղ վարդագույն տուֆաքարից: Հետաքրքիր է ներքին տարածությունում քարերի դասավորությունը: Հաշվի առնելով, որ պատերի շարքերի քարերի կողերը պատի մեջ տեղադրվելու ժամանակ կարող են փշրվել, դրանց արտաքին եզրը մոտ 1,5 սմ լայնության վրա 90°-ի թեքությամբ կտրված է՝ ստանալով, այսպես կոչված, «ֆասկայի» ձև: Վերջինս, բացի կառուցողական նշանակությունից, շեշտում է պատերի շարքերի ուղղությունները, միաժամանակ քարի ֆակտուրայի վրա ստեղծելով լույսի և ստվերի խաղ: Նմանատիպ «ֆասկաների» առկայությունը նկատելի է նաև Քասախի տաճարում:

Այստեղ, ի տարբերություն «Ծիրանավորի», քարերի արտաքին եզրերում մոտ կես սանտիմետր լայնության վրա 45 աստիճանի թեքությամբ կատարված է նույնպես «ֆասկա»: Ընդհանրապես հարկ է նշել, որ շատ ընդհանրություններ կան Աշտարակի բազիլիկայի և Քասախի բազիլիկայի միջև, որոնց մասին կանդրադառնանք քիչ ավելի ուշ:

5. Տաճարի կառուցման և վերակառուցման հիմնական շրջանները

Կատարված մանրամասն ուսումնասիրությունը բերում է այն համոզմունքին, որ որպես քրիստոնեական ժամանակաշրջանի տաճար, ծիրանավորը վերաբերվում է 4-րդ դարի կառույցներից: Չենք բացառում, որ տաճարը կարող է կառուցված լինել նախաքրիստոնեական կառույցի հիմքերի վրա, որի մասին հանգամանորեն կխոսենք ավելի ուշ: Ինչպես նշում է Թ. Թորամանյանը, «Աշտարակի տիպի կառույցները (Քասախը, Երերույքը, Տեկորը) պատկանում են Հայաստանի հեթանոսական շրջանի տաճարաշինության ժամանակաշրջանին, պարզապես եղել են հեթանոսական մեհյաններ»[13]: Ակադեմիկոս Ն. Մառի ասելով՝ «Ծիրանավոր եկեղեցու տեղում, հեթանոսական շրջանում եղել է Վիշապ Աշտարակ-Աժդահակի կամ Ծտեկի պաշտամունքի մի տաճար, որը հետո քրիստոնեության օրոք վերածվել է մի հնագույն տիպի բազիլիկի: Տաճարի մոտ հետագայում գոյացել է գյուղ, որը հնագույն սրբության անունով կոչվել է Աշտարակ»: Այս տեսակետի հաստատմանը նպաստում է նաև մեր կողմից բացված աբսիդի առանցքով մեկ մետր հեռավորության, 70—80 սմ խորությամբ ավերված ածուխով հորը, որը բերում է մեզ այն համոզմունքին, որ վերջինս, հավանական է, օգտագործվել է ատրուշանի վառված ածուխի հավաքման համար: Նշենք, որ ժամանակին նմանատիպ հորեր բացվել են Աղստում (Աշտարակի շրջան, Զորափ գյուղ) և Թանահատում (Սիսիանի շրջան): Վերջիններս պահպանված են:

Ներկայացվող հոդվածի ուսումնասիրության առարկան հիմնականում վերաբերում է տաճարի վաղքրիստոնեական ժամանակահատվածին (միաժամանակ անդրադառնալով նրա վրա հետագա կրած շինարարական փոփոխություններին), որից ամբողջական պահպանված հուշարձան այժմ Խորհրդային Հայաստանի տարածքում չունենք: Այդ շրջանին բնորոշ որոշ

[13] **Թ. Թորամանյան**, Տեկորի տաճարը, էջ 210, 211: Նույն հեղ. «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր 1, էջ 244—289:

հատված պահպանված է նաև «Հովհաննավանքի» միանավ բազիլիկ եկեղեցում:

Խոսքը վերաբերում է 4-րդ դարի սկզբին, երբ Հայաստանը քրիստոնեությունը ընդունեց որպես պետական կրոն: Ինչպես հայտնի է, վաղ քրիստոնեական շրջանի մի շարք եկեղեցիներ կառուցվեցին հեթանոսական տաճարների հիմքերի վրա: Իսկ այդ ժամանակաշրջանում և դրանից մի քանի հարյուրամյակ ուշ մեր երկրի քաղաքական վիճակը և ճարտարապետական ժառանգությունը նպաստեցին նոր տիպի կրոնական կառույցների ձևավաստեղծմանը, որոնց հիմքում ընկած էին հասարակական այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին բազիլիկաները: Մինչև բազիլիկաների (որպես քրիստոնեական կառույցներ) կառուցումը և տարածումը հայ շինարարին արդեն հայտնի էին կոնստրուկտիվ որոշ էլեմենտներ և կոնստրուկցիաներ, ինչպիսիք էին՝ կամարը, թաղը, գմբեթարդը: Վերոհիշյալ շինարարական շրջանը մի ինքնատիպ շրջան էր, երբ Արևելքից կրոնի ներմուծման հետ միաժամանակ Հայաստան ներմուծվեցին կրոնական այն կառույցների տիպային ձևերը, որոնք, լինելով ինժեներական տեսանկյունից թույլ կառույցներ, չդիմացան բնական աղետներին և շատ կարճ ժամանակահատվածում վերափոխվեցին՝ փոխելով իրենց կոնստրուկտիվ ձևերը ու էլեմենտները և ստեղծելով ճարտարապետական նոր որակի կառույցներ, որոնք և հիմք հանդիսացան հայ ճարտարապետական մտքի ոսկեդարի համար:

Այժմ ցանկանում ենք անդրադառնալ վերը նշված շինարարական շրջանին և «Ծիրանավոր» եկեղեցու վրա պահպանված փաստացի նյութերի միջոցով տալ նրա վերակազմությունը 4-րդ դարի առաջին կեսին:

Եկեղեցու հատակագծային հորինվածքը եղել է եռանավ բազիլիկ: Արևելքից պայտաձև հատակագծով ավագ խորանը դրսից չի արտահայտված, ինչպես նույն ժամանակաշրջանից պահպանված մեզ հայտնի մի շարք բազիլիկ եկեղեցիներում, ինչպիսիք են՝ Քասախը, Տեկորը, Եղվարդը, Դվինը և այլն: Բացառություն են կազմում Խանածուխի Ծիծեռնակավանքը և Զորափի (Աղսի) բազիլիկ եկեղեցիները: Այստեղ ավագ խորանը ներգծված է ուղղանկյան մեջ: Հյուսիսից և հարավից ունի ավանդատներ, որոնք ավագ խորանի հետ առնված են մեկ ընդհանուր ուղղաձիգ պատի մեջ: Կառույցի կենտրոնական նավը ունեցել է երկու զույգ մույթեր, որոնք ներքին տարածությունը բաժանել են կենտրոնական՝ մեծ, և նրա երկու կողմերում՝ փոքր նավերի: Այդ մույթերը այժմ ավերված են (պահպանված են նրանցից մեկի հիմնատակի որոշ քարերը): Վերջիններիս միջոցով գլխավոր նավը փայտե ծածկի միջոցով կապվել է կողային նավերի հետ: Մույթերը կամարաշարքերի ձևով ձգվել են արևելքից արևմուտք, որոնց վրա բարձրացել է պատային հարթությունը: Վերջինս հանդիսացել է այն հիմքը, որի վրա նստել է գլխավոր փայտե ծածկը (գծ-1 Ա, գծ-2 գ): Պետք է նշել, որ ավագ խորանի երկու կողմերի խարիսխների, ինչպես նաև փոքր նավերի և արևմտյան պատի որմնասյուների խարիսխների մշակումը միևնույն ժամանակաշրջանին են պատկանում: Դա երևում է նրանց մշակման ձևերից և չափերից:

Եկեղեցու հատակի նիշը արևելքից դեպի արևմուտք անկում ունի, որը հանվանական է պայմանավորված լինի հավատացյալների՝ ըստ իրենց հավատքի դասի պատկանելության տեղավորվելու անհրաժեշտությամբ (գծ.-1 Ա): Երևույթը շատ հետաքրքրական է և խոր ուսումնասիրության կարիք ունի: Տեղում պահպանված են դասերից երկուսը (իրականում եղել է չորսը):

Հուշարձանի հատակը ստացվել է աստիճանավոր, որը ոչ թե ստացովի էլեմենտ է, այլ փաստ, կապված մոլթերի և որմնամոլթերի ստորին նիշերի մակարդակների անկման հետ: Ի դեպ հատակի անկման նման երևույթ գոյություն ունի նաև Քասախի բազիլիկ եկեղեցում, սակայն այստեղ դասերը ամբողջությամբ ավերված են: Նման դասերի առկայությունը եզակի երևույթ է:

Բացվածքներ.— Եկեղեցին հարավից և արևմուտքից ունեցել է մեկական մուտք՝ ավարտված շքամուտքերով: Արևմուտքից ունի երկու խոշոր պատուհաններ (լուսանկար-1, գծ.-3), որոնցից ստորինը զույգ է: Վերջինիս պսակի մշակման ձևերը (ներսից) նման են Լեռնակետի միանավ բազիլիկ եկեղեցու արևմտյան ճակատի զույգ պատուհանների մշակման ձևերին: Արևելքից ունի մեկ խոշոր պատուհան գլխավոր խորանում և երկու փոքր պատուհան՝ ավանդատներում (գծ.-2 Գ): Վերջիններս հավանական է հետագա ժամանակաշրջանում (4-րդ դար) կառույցի կրած փոփոխությունների արդյունք են՝ կապված պայտաձև խորանի և ավանդատների ավելացումների հետ: Այդ փոփոխման մասին ժամանակին արտահայտվել է Թ. Թորամանյանը: Նույնանման կարծիք է հայտնում նաև Ֆրանչեսկո Գանդոլֆոն իր ծավալուն և բովանդակալից աշխատության մեջ՝ նվիրված հայկական բազիլիկ եկեղեցիներին: Հեղինակը ուշադրություն է դարձրել ավագ խորանի պատուհանի պսակի հնագույն ձևերին, որը իրականացված է երեք կտորից, կենտրոնական կոնաձև: Վերջինս համանման է Ագարակի «Մարիամի» պատուհանի պսակին: Միաժամանակ հեղինակը խոսում է ավանդատների պատուհանների հետագա ավելացումների մասին[14]:

Հարավից կառույցն ունի երկու փոքր բացվածքներ, որոնք չեն բնորոշում այդ ժամանակաշրջանի պատուհանների ձևերը (հարավային պատը հիմնատակով վերաշարվել է): Իրականում նրա բացվածքները եղել են խոշոր, համանման արևելյան և արևմտյան ճակատների պատուհաններին:

Ծածկերը.— Երկրորդ շինարարական շրջանում հուշարձանն ունեցել է փայտե ծածկ: Այդ մասին բերում ենք այն կարևորագույն փաստերը, որոնք ի հայտ եկան հուշարձանի չափագրման և ուսումնասիրությունների ժամանակ:

Պահպանված են եկեղեցու հյուսիսային ավանդատան հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան պատերի այն հիմնական և կարևոր հատվածները, որոնք մեզ հուշում են փայտե ծածկերի ձևերի և դրանց կոնստրուկտիվ լուծումների մասին (գծ.-2 Դ, Զ): Վերը նշված մասերում (արևելք և արևմուտք) պատերը շարված են թեքությամբ, ըստ որի նրանց վերին եզրը համապատասխանում է հուշարձանի նույն ճակատի վերին նիշին (քիվատակ հարթության նիշին): Ապա նույն մակարդակով տեղադրված է ատամնավոր քիվը: Կենտրոնական նավը իշխել է կողային փոքր նավերի վրա իր ուղղաձիգ նիշերով: Դրա անվիճելի ապացույցներն են ճակտոնի անկյունային քարերը (արևմուտքում) (գծ.-2 Գ, գծ.-3), վերին պատուհանից վեր գտնվող հարթ երեսապատի պատային հատվածը (լուսանկար-1), ավերված երեսապատման քարերի բները և ճակտոնի ուրվագիծը (ներսից): Պահպանված են կենտրոնական նավի ճակտոնների անկյունային հատվածները հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից, ինչպես նաև արևմտյան ճակտոնի քիվատակ հարթության անկյունային քարերը: Այս տվյալները շատ հանգուցա-

---

[14] **Francesco Candolfo**—"Le Basiliche Armene, Roma. 1982, p. 81.

յին են և արտահայտում են տվյալ դարաշրջանի հուշարձանի արտաքին ձևերը, ինչպես նաև ծածկի երկթեք (կենտրոնական) և միաթեք (փոքր նավերը) լինելու անվիճելի փաստը, այսինքն քառալանջ: Մինչև այժմ, խոսելով տաճարի ծածկերի մասին, շատ հեղինակներ (Յարալով, Յակոբսոն, Սահինյան) հայտնում էին այն կարծիքը, որ այն ունեցել է երկթեք ծածկեր, և որ եռանավ բազիլիկ եկեղեցիները հիմնականում ունեցել են նմանատիպ ծածկեր (երկթեք), այսպես կոչված «արևելյան տիպը»: Տաճարի վրա պահպանված այս հանգուցային փաստերը տեղիք են տալիս վերանայելու այդ կարծիքները, այն է՝ եռանավ բազիլիկ եկեղեցիների ծածկերը Հայաստանում ունեցել են և՛ երկլանջ, և՛ քառալանջ տանիքներ (Ծիրանավոր, Ծիծեռնավանք):

Տալով հուշարձանի այս շինարարական շրջանի վերակազմությունը, խորանի գմբեթարդից վեր գտնվող ծավալի մասին (քանի որ պահպանված նյութ չունենք) կարող ենք ասել, որ այն օգտագործվել է կա՛մ որպես գաղտնարան (գծ.-1 Ա) և կա՛մ որպես բաց կամարներով փոքր սրահ, որպիսին տեսնում ենք «Ծիծեռնակավանքում», Թալինի կաթողիկեում և նման մի շարք այլ հուշարձաններում: Հակառակ վարկածի դեպքում այն ամբողջությամբ պետք է լիցք լիներ, իսկ նման բեռան առկայությունը գմբեթարդի վրա միանգամայն անհավանական է, քանի որ կառույցը իր կառուցողական տեխնիկայով և համաչափություններով (բարակ պատերով՝ և որմնասյուներով) վկայում է այն մասին, որ նման նուրբ ճաշակ ունեցող շինարարը դժվար թէ եկեղեցու գմբեթարդը ծանրացներ այդպիսի բեռով, երբ ծավալը կարող էր օգտագործել որպես գաղտնարան կամ, ընդգծելու համար խորանը, նրա վերևում ստեղծել բաց սրահ:

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Խոսելով կառույցի կառուցողական չափման միավորի մասին, պետք է նշել, որ այն ճիշտ և ճիշտ հավասար է ուրարտական կանգունի: Ուրարտական կանգունի գաղափարի մասին Խ. Սամվելյանը ժամանակին իր հանգամանալից և ուշագրավ ուսումնասիրություններից այն եզրակացության է հասել, որ ուրարտական և հայկական պաշտամունքային կառույցների միջև կա նկատելի կապ[15]: Նման եզրակացության է հանգել նաև ճարտ. Ա. Սիվկովը՝ ուսումնասիրելով հայկական պատմական ճարտարապետության մեջ օգտագործված երկարության չափի միավորները: Համեմատելով, օրինակ, Քասախի տաճարի և ուրարտական Թեյշեբաինի քաղաքի ճարտարապետական կառույցների չափումները՝ այդ հիման վրա հեղինակը հաստատում է հայ մատենագրության մեջ հիշատակվող չափման միավորը, որն օգտագործվել է հայկական ճարտարապետության վաղ շրջանի քրիստոնեական հուշարձանների մեջ[16]:

Սիվկովը նշում է, որ այդ միավորը Տեկորի տաճարում հավասար է 51,8, Քասախում՝ 52,0—52,1, Աշտարակի Ծիրանավորում՝ 51,6—52,0 սանտիմետրի: Հարկ է նշել, որ Քասախի տաճարի համար այդ չափման միավորը

---

[15] **Խ. Սամուելյան**, «Հին Հայաստանի կուլտուրան», Երևան 1941 թ., հատ. 2, էջ 231:

[16] **А. В. Сивков**—«Об основных линейных мерах Урарту и древней Армении», Изд. АН Арм. ССР, 1944, № 1—2, стр. 85.

Ա. Սահինյանի կողմից ճշտվել է ավելի ստույգ. այն հավասար է 51,8 սանտիմետրի[17]:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների շնորհիվ ճշտվեց նաև Աշտարակի Ծիրանավորի չափման միավորը. կանգունը հավասար է 51,8 սմ-ի: Հատակագծային ծավալա-տարածական, ինչպես նաև ճակատների ընդհանուր կառուցվածքներում, որպես կառուցողական միասնական չափման միավոր, ընդունված է հարավային մուտքի բացվածքի չափը (ներսից): Վերջինիս բացվածքի չափը հավասար է 129 սմ-ի: Այսինքն՝ այդ մուտքի բացվածքի չափը հավասար է 2,5 կանգունի՝ 2,5·0,518 129,5 սմ: Տարբերությունը մուտքի համար կազմում է 0,5 սանտիմետր: 2,5 կանգունի չափը, որպես կառուցման չափի հիմնական միավոր, հանդես է գալիս տաճարի բոլոր հիմնական չափերում (տե՛ս առաջին աղյուսակ): Ինչպես երևում է, այս կանգունը (51,8 սմ) նույնն է, ինչ որ Քասախի համար կիրառված կանգունը: Սա կրկին մի ապացույց է, որը հաստատում է գոյություն ունեցող ընդհանրությունը Աշտարակի Ծիրանավորի և Քասախի տաճարի միջև:

6. Տաճարի վրա տեղի ունեցած վերափոխումների հետագա շրջանները

ա) Փայտե ծածկի փոխարինումը քարով (արտահայտված թաղի ձևով): Հուշարձանի տեխնիկական վիճակը նկարագրելիս արդեն նշվել էր, որ տաճարի ներքին տարածությունը հանդիսանում է հետագա դարերում վերափոխումների արդյունք: Ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ այդ վերափոխումները հավանական է, որ տեղի են ունեցել 5—6-րդ դարերում, որի հետ մեկտեղ փոխվել է նաև ծածկը: Պատճառը փայտե ծածկի հենց նյութն էր, որը չէր կարող դիմադրել ժամանակին, բացի այդ, այս շինարարական շրջանում բազիլիկ կառույցներում երկայնական պատերի հետ կապող ոչ մի կոնստրուկտիվ էլեմենտ չկար, այսինքն որպես ինժեներական կառույց բազիլիկան թույլ կառույց էր, և սրանք էին այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով նման քրիստոնեական կառույցները սկսեցին ձեվափոխել իրենց ծածկի ձևերը և կոնստրուկցիաները: Տաճարի այս շինարարական շրջանում հիմնականում փոխվել է ծածկը: Փայտե ծածկը փոխարինվել է քարով, արտահայտվել է թաղի ձևով: Թաղը ամուր և ապահով լինելու համար կառույցի երկու զույգ մույթերը փոխարինվել են երեքով (գծ. 1 Բ), որոնց վրայից սկսվող թաղատակ կամարները ավելի են ուժեղացրել ծածկի կրողունակությունը: Վերջինիս խարիսխների մշակումները նույնն են, ինչ որ որմնամույթերի և աբսիդի խարիսխի մշակումները: Այժմ պահպանված և մեզ հասած փաստացի տվյալները ասում են, որ մեծ նավի թաղատակ կամարները կիսաշրջանաձև են, իսկ փոքր նավերինը՝ խիստ պայտաձև աղեղներ: Վերջիններս երկու կողմից նստում են պատերի մեջ ագուցված պահունակների վրա: Վերանորոգման այս շրջանում հուշարձանի ուղղաձիգ նիշերը չէին փոխվել: Փոքր նավերի թաղակիր նիշերը համապատասխանեցված են փայտածածկ տանիքի ուղղաձիգ նիշերի հետ (գծ. 2 Զ, գծ. 3): Թաղի վերին նիշի նման ընտրությունը իր հետ առաջ է բերել մի հակասություն: Փոքր նավերի ծածկերի իրականացումը դառնում է անհնարին, որովհետև այս դեպքում թաղի և տանիքի շփման կետում ստացվում է նվազա-

---

[17] **Սահինյան**, «Քասախի բազիլիկական ճարտարապետություն», Երևան, 1955 թ., էջ 142—147:

գույն հաստություն, որը գործնականում հնարավոր չէր իրականացնել: Վերը նշված հանգամանքի պատճառով էլ շինարարը այս մասում քիվի վրա ավելացրել է երկրորդ քիվը, որպեսզի կարողանա լուծել թաղի հաստության հարցը: Կառույցի միջից գտնվեց այն քիվը, որի մասին վերը խոսվեց (գծ.-2 Ե): Այն իրենից ներկայացնում է նույնպես ատամնավոր քիվ, սակայն վերջինս ունի ավելի բարդ մանրամասներ (շատ նման է Քասախի տաճարի ատամնավոր քիվին): Կենտրոնական թաղը արևմտյան պատի հետ իրականացված է առանց որևիցե շինարարական կապի (լուսանկար 1), որը տեղում շատ հստակ երևում է (հարավ-արևմտյան հատված): Որոշակի կերպով երևվում է նաև արևմտյան պատի բացվածքների (ներսից) ռիթմիկ բաժանումների խախտումը թաղի առաջացման հետ, հատկապես վերին պատուհանի նկատմամբ, երբ թաղի նիշը սկսվում է այդ պատուհանի համարյա պսակի վրայից:

Շինարարական այս շրջանի էական փոփոխություններից է այունազարդ շքամուտքերի կառուցումը հարավային և արևմտյան մուտքերում: Վերջինիս ակնառու ապացույցն է հարավային մուտքի աջ որմնասյան խարիսխի առկայությունը (գծ.-1 Բ), որը առանց շինարարական կապի, ուղղակի դրված է տաճարի գետնախարիսխի առաջին շարքի վրա և հարթ մակերեսով հակված է հաջորդ աստիճանի ուղղաձիգ մակերեսին (ինքը, շքամուտքը ամբողջությամբ ավերված է): Այս շքամուտքի քարի մանրամասները շատ նման են հյուսիսային, արևմտյան որմնամույթերի և աբսիդի աջ և ձախ, ինչպես նաև վերափոխված մույթերի խարիսխների մանրամասներին: Մուտքերի նմանատիպ կառուցողական ձևերը առկա են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ մի շարք հուշարձաններում. Քասախ, Երերույք և այլն:

Այս շինարարական շրջանում հուշարձանի վրա օգտագործված կառուցողական չափման միավորը՝ կանգունը ճիշտ և ճիշտ համապատասխանում է երկրորդ շինարարական շրջանի կանգունին (51,8 սմ): Դա բնական է, քանի որ այս երկու շինարարական շրջանների միջև ժամանակահատվածը շատ կարճ է:

Մինչ այս շինարարական շրջանի նկարագրության ավարտելը հարկ ենք համարում կանգ առնել մի շատ ուշագրավ փաստի առաջ: Ուսումնասիրությունների ժամանակ տաճարի թաղի շաղախի միջից հայտնաբերվեց տրոմպի քար (լուսանկար 7): Վերջինիս մշակման ձևերը շատ բնորոշ են վաղ շրջանի գմբեթավոր եկեղեցիների տրոմպների մշակման ձևերին: Համեմատելով Ողջաբերդի տրոմպի քարի հետ, նկատում ենք շատ ընդհանրություններ (չափերը, անկյունը՝ 90° և այլն, բացառություն է կազմում վերջինիս զարդամոտիվների բացակայությունը): Հավանական է, որ տաճարը փայտածածկի և թաղակապ անցման շինարարական շրջանների արանքում կամ դրանցից հետո գմբեթավոր էր: Գմբեթավորելու համար հուշարձանը մեծ փոփոխությունների կարիք ամենևին չէր զգում, քանի որ այն ունի կրող հիմնական մույթեր, որոնց կապող կամարների վրա էլ հանգչում է թմբուկը: Այստեղ պարզորոշ չենք կարող խոսել թմբուկի ձևի մասին (բազմանիստ, քառակուսի), սակայն մեր այս տեսակետը համարում ենք տրամաբանական, վերջինս, իհարկե, դեռևս խոր ուսումնասիրությունների կարիք ունի (կապված նոր նյութերի ի հայտ գալու հետ): Տաճարի գմբեթավորման գաղափարի մասին կարծիք է տվել Յակոբսոնը, նշելով, որ Աշտարակի և Քասախի, ինչպես նաև Վաղարշապատի բազիլիկաներում T-անման մույթե-

ը գլխավոր նավի ներքին տարածությունը բաժանում են քառակուսիների: Այդ երևույթը նկատվում է նաև Երերույքի բազիլիկայում: Նման բաժանումը ասես հանգեցնում է տաճարի գմբեթի կառուցմանը[18]: Գմբեթավորման գաղափարի մասին արտահայտվել է նաև Ֆ. Գանդոլֆոն, նկատի ունենալով նույնպես Տ-ռանման մույթերի ներքին տարածության բաժանումը քառակուսիների[19]:

բ) Տաճարի վերափոխումը ամրոցի.— Կառույցի ծածկը 1815 թ. ավերվել է, և տաճարը, նկատի ունենալով նրա դիրքը ձորի եզրին, ամբողջությամբ վեր է ածվել ամրոցի՝ դառնալով ռազմա-ստրատեգիական հենակետ[20]: Ինչպես նշում է Կ. Հովհաննիսյանը, «...այդ եկեղեցական շենքերը ամրակուռ կառույցներ են՝ շինված ամուր քարից, վտանգի դեպքում դառնում են ռազմական հենակետեր՝ սովորաբար տեղական ազգաբնակչությանը պաշտպանելու նպատակով»[21]: Եկեղեցին ամրոցի վերածվելիս, տաճարի արևմտյան և հյուսիսային ճակատները շարվել են լրացուցիչ պատերով (դրսի կողմից), որոնց բարձրությունը հասել է մինչև 12 մ-ի: Հարավային (համարյա հիմնատակով) և արևելյան պատերի քանդված և կործանված հատվածները վերաշարվել են և իրենց բարձրությամբ հավասարվել լրացուցիչ (կըրկնակի) շարված պատերի բարձրությանը: Այսպիսով տաճարը չորս կողմից առնվել է բարձր պատերի մեջ և վեր է ածվել մի անառիկ ամրոցի, որը աչքի է ընկնում ամրոցային շինարարությանը հատուկ ձևերով: Հետագայում վերակառուցված տաճարի հարավային նավի վերին մակարդակը վերածվել է պաշտպանական հարթակի: Հարավ-արևմտյան անկյունում կառուցվել է մի թաղակապ սենյակ (6·3 մ չափերով), որ հավանական է, ծառայել է որպես զինանոց կամ միգուցե որպես զորանոցային սենյակ: Արխիվային լուսանկարներից պարզվեց, որ այդ սենյակը ամբողջ նավի ուղղությամբ չի ձգվել, այլ ամփոփվել է վերը նշված չափերի մեջ: Արևելքից ունեցել է ճակտոն՝ փոքրիկ պատուհանով և մի մուտք, որոնք այժմ գոյություն չունեն: Հարավային պատի մեջ արված են մոտ երեք տասնյակի հասնող բացվածքներ, որտեղից պաշտպանվողները կրակ են բաց արել թշնամու վրա: Ուշագրավ են այդ բացվածքների «խորամանկ» լուծումները. դրանք դրսից հազիվ են նշմարվում, բայց ներսից հնարավորություն են ստեղծում շատ լավ դիտելու շրջակայքը: Բացի այդ փոքր բացվածքներից, այս ճակատում պահպանված են հինգ համեմատաբար մեծ բացվածքներ՝ հրակնարկներ: Դրանցից միայն մեկն է, որ իր կառուցողական ձևով լրիվ պահպանված է:

Նմանատիպ ամրությունների են վերածվել նաև մի շարք հուշարձաններ, ինչպիսիք են՝ Փարպիի «Ծիրանավորը», Բյուրականի Ս. Հովհաննեսը, Օղուլլուի, Արգինայի, Շիրակավանի եկեղեցիները:

գ) Մասնակի վերանորոգումներ.— Այս շինարարական շրջանը վերաբերում է 20-րդ դարին: 60-ական թվականներին կատարվեցին մի շարք վերանորոգումներ տաճարի թե՛ ներքին տարածություններում և թե՛ ճակատներում: Վերականգնվել են փլցված աբսիդը իր պայտաձև կամարով և հարավային կամարաշարքի մի մասը՝ թաղակապ ծածկով: Բացի այդ, մաքրր-

---

[18] **Якобсон А. Л.**—«Закономерности в развитии ранне-средневековой архитектуры».

[19] **F. Gandolfo**—"Le Basiliche Armene, Roma, 1982, p. 82.

[20] **Երվանդ Շահազիզ**, «Աշտարակի պատմությունը» (բնագիր):

[21] **Կ. Լ. Հովհաննիսյան**, «Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում», Երևան 1978 թ., էջ 140:

վել է տաճարի ներքին տարածությունը կուտակված լիցքից և բեկորներից: Արևելյան ճակատի վերանորոգման ժամանակ թույլ են տրված արմատական շատ անճշտություններ: Դրանք ամենից առաջ վերաբերում են տաճարի արտաքին ձևերին և ծածկերին: Ըստ երևույթին տաճարը լիարժեք չի ուսումնասիրվել, որի պատճառով էլ հուշարձանի համար արվել է երկթեք տանիք:

Անճշտություն է թույլ տված նաև հուշարձանի հարավային մուտքում: Այստեղ առաջին գետնախարիսխը մուտքերի անկյունների մոտ կտրվելու փոխարեն լրացվել են (պահպանված շքամուտքի խարսխի մանրամասները պտտվում են դեպի մուտքի կողմը, և ավելացված գետնախարիսխը փակում է այդ մանրամասները՝ միաժամանակ փոքրացնելով մուտքի ուղղաձիգ բացվածքը):

Այսպիսով, ամփոփելով մեր ուսումնասիրությունը Աշտարակի «Ծիրանավոր» եկեղեցու վերաբերյալ, կարող ենք ասել հետևյալը.

ա) Տաճարը որպես քրիստոնեական կառույց ձևավորվել է 4-րդ դարի առաջին կեսին (ծածկերը փայտածածկ):

բ) 5—6-րդ դարում փոխվել է նրա ծածկը (թաղակապ):

գ) 1815 թ. Ծիրանավորը վերակառուցվել է ամրոցի:

դ) Մասնակի վերանորոգումներ (20-րդ դար, 60-ական թվականներ):

Աշտարակի «Ծիրանավոր» եկեղեցու վրա ասես դրոշմված է ամբողջ հայ ժողովրդի ճարտարապետության պատմությունը վաղ քրիստոնեական ժամանակաշրջանից մինչև ուշ միջնադար: Պահպանված նյութը պարզորոշ կերպով վեր է հանում ինչպես մեր ժողովրդի, այնպես էլ նրա ճարտարապետության պատմությունը, մի պատմություն, որ իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի քաղաքական և մշակութային կյանքի վերելքներն ու անկումները:

«Ծիրանավոր» եկեղեցու անաղարտ պահպանված լինելու մասին Թորամանյանը գրում է հետևյալը. «Քասախի և Աշտարակի հնագույն եկեղեցիները ներկայանում են որպես իրենց նախնական ձևերի մեջ ավելի անաղարտ պահպանված օրինակներ, հավելված համարելով միայն արևելյան կողմերի կիսաբոլորակ խորանները»:

Հուշարձանը, արդարև, իր անաղարտ պահպանված մասերով մի թաքնված էջ է հայ վաղ քրիստոնեական ճարտարապետության մեջ և դեռևս կարիք ունի վերջնական ուսումնասիրության: Այստեղ պետք է նշել մի հանգամանք ևս, որ այդ ժամանակաշրջանի մեզ հասած հուշարձաններից միայն Աշտարակի «Ծիրանավորը» և Հովհաննավանքի միանավ բազիլիկ եկեղեցիներն են, որ հիմք են տալիս մեզ խոսելու հուշարձանի մասին ոչ թե անալոգով, այն համեմատելով սիրիական, հունահռոմեական նույն ժամանակաշրջանի հուշարձանների հետ ու միայն այդ կերպ պատկերացում տալու նրանց նախնական կերպարի մասին, այլ ելնելով բուն հուշարձանի վրա պահպանված փաստացի նյութերից:

Ճիշտ է, սա մի շրջան է, երբ կրոնի հետ միասին ներմուծվեցին նաև նոր ճարտարապետական ձևերը, սակայն մեր հողի վրա այն իր ինքնուրույն արմատները ձգեց և դարձավ հիմնական իշխող ձևը վաղ քրիստոնեական տաճարաշինության մեջ ու տվեց այնպիսի գանձեր, որոնցով այժմ հպարտանում է մեր ժողովուրդը (Տեկոր, Երերույք, Քասախ, Ծիրանավոր):

Հուշարձանի վերակազմության նախագիծը ճարտարապետական խորհրդի քննարկմանն է ներկայացվել 1986 թ. ապրիլի 9-ին և արժանացել հավանության: